

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՀԱՍՏԱՏՄԱՆ) ԵՆԹԱԿԱ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2009 թվականի դեկտեմբերի 11)

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության (այսուհետ՝ Մաքսային միություն) անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմերը, հիմնվելով «Եվրասիական տնտեսական համայնքի ստեղծման մասին» 2000 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի, «Մաքսային միության հանձնաժողովի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի, «Միասնական մաքսային տարածք ստեղծելու եւ Մաքսային միություն ձեւավորելու մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի եւ «Տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի վրա, նպատակ ունենալով. ստեղծել Կողմ հանդիսացող պետությունների մաքսային տարածք եւ ձեւավորել մաքսային միություն, ստեղծել պայմաններ Մաքսային միության մաքսային տարածքում արտադրանքի (ապրանքների) ազատ շրջանառության ապահովման համար, սահմանել համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա արտադրանքի՝ Կողմ հանդիսացող պետությունների մաքսային տարածք ներսերման եւ դրանց տարածքներով տեղափոխման կարգը, համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

Սույն Համաձայնագիրը կիրառվում է պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա եւ մաքսային տարածք ներսերվող արտադրանքի (այսուհետ՝ արտադրանք), ինչպես նաեւ Կողմ հանդիսացող մեկ պետության տարածքից Կողմ հանդիսացող մյուս պետությունների տարածք տեղափոխվող արտադրանքի նկատմամբ:

Սույն Համաձայնագիրը կիրառվում է արտադրանքի նկատմամբ մինչեւ այդ արտադրանքի վերաբերյալ Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը:

Հոդված 2

Համապատասխանության հաստատման ոլորտում Կողմերն իրականացնում են համաձայնեցված քաղաքականություն՝ նպատակ ունենալով հասնել.

Հավաստագրման (համապատասխանության գնահատման (հաստատման)) մարմինների եւ համապատասխանության աշխատանքներ իրականացնող փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) (այսուհետ՝ հավաստագրման մարմիններ եւ փորձարկման լաբորատորիաներ (կենտրոններ)) հավատարմագրման փոխադարձ ճանաչմանը,

արտադրանքի համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման) (այսուհետ՝ համապատասխանության հաստատման) ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչմանը,

Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջներին արտադրանքի համապատասխանության հաստատման համար Կողմ հանդիսացող պետությունների հայտատուների (արտադրողների, մատակարարների եւ ներմուծողների) համար հավասար պայմանների ապահովմանը:

Հավաստագրման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) հավատարմագրման փոխադարձ ճանաչման պայմանները սահմանվում են Կողմերի միջեւ գործող առանձին համաձայնագրով:

Հոդված 3

Կողմ հանդիսացող պետության տարածքում արտադրանքը բաց է թողնվում շրջանառության համար՝ Կողմ հանդիսացող այդ պետության օրենսդրությանն եւ սույն Համաձայնագրին համապատասխան:

Հոդված 4

1. Սույն Համաձայնագրի կիրարկման նպատակով ստեղծվում է Մաքսային միության հավաստագրման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեգիստր (այսուհետ՝ Միասնական ռեգիստր):

Հավաստագրման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)՝ Միասնական ռեգիստրում ընդգրկման, ինչպես նաև Միասնական ռեգիստրի ստեղծման ու սահմանման կարգը սահմանվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից:

2. Այն արտադրանքը, որի նկատմամբ Կողմերի կողմից սահմանվել են նույն պարտադիր պահանջները, համապատասխանության հաստատման նույն ձեռնարկներն ու սխեմաները, ինչպես նաև արտադրանքի համապատասխանությունը հաստատելիս կիրառվում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների նույն մեթոդները, միասնական մաքսային տարածքում բաց է թողնվում շրջանառության համար, եթե Կողմ հանդիսացող ցանկացած պետության տարածքում այն անցել է համապատասխանության հաստատման սահմանված ընթացակարգերը՝ հետեւյալ պայմանների պահպանմամբ.

Միասնական ռեգիստրում ընդգրկված հավաստագրման մարմնի կողմից հավաստագրման անցկացումը,

Միասնական ռեգիստրում ընդգրկված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում) փորձարկումների իրականացումը,

համապատասխանության հավաստագրերն ու համապատասխանության վերաբերյալ հայտարարագրերը պետք է ձեւակերպված լինեն միասնական ձեռնարկով:

Համապատասխանության հավաստագրերի ու համապատասխանության վերաբերյալ հայտարարագրերի միասնական ձեռնարկը սահմանվում է Մաքսային միության Հանձնաժողովի կողմից:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված արտադրանքն ընդգրկվում է Մաքսային միության շրջանակներում համապատասխանության հաստատման ենթակա արտադրանքի միասնական ցանկում՝ միասնական փաստաթղթերի տրամադրմամբ (այսուհետ՝ Միասնական ցանկ):

Միասնական ցանկի ստեղծումը, հաստատումն ու սահմանումն իրականացվում է Մաքսային միության հանձնաժողովի կողմից:

Հոդված 5

Արտադրանքի համապատասխանությունը հաստատելիս Կողմ հանդիսացող պետությունում ստացված արտադրանքի փորձարկման արդյունքները (փորձարկումների վերաբերյալ արձանագրությունները) ճանաչվում են Միասնական ռեգիստրում ընդգրկված հավաստագրման

մարմնի, Կողմ հանդիսացող նշանակման պետության կողմից՝ հետեւյալ պայմանների պահպանմամբ.

արտադրանքի նկատմամբ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների նույն մեթոդների կիրառումը,

միասնական ռեգիստրում ընդգրկված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում) փորձարկումների իրականացումը,

Հոդված 6

1. Կողմ հանդիսացող պետության տարածքում արտադրված, Կողմ հանդիսացող մյուս պետություններ մատակարարվող եւ Կողմ հանդիսացող նշանակման պետությունում համապատասխանության հայտարարագրման ենթակա արտադրանքի համապատասխանության վերաբերյալ հայտարարագրերի ընդունումն իրականացվում է Կողմ հանդիսացող այն պետության արտադրողի կողմից, որի տարածքում արտադրվել է արտադրանքը, կամ Կողմ հանդիսացող նշանակման պետության մատակարարի կողմից՝ Կողմ հանդիսացող նշանակման պետության օրենսդրության համաձայն:

2. Կողմ հանդիսացող այն պետության (որի տարածքում արտադրվել է արտադրանքը) արտադրողը, որն ընդունել է համապատասխանության վերաբերյալ հայտարարագիրը՝ խախտելով Կողմ հանդիսացող նշանակման պետության հայտարարագրման կանոնները, խախտումներից թեկուզ մեկի հետեւանքով սահմանված պահանջներին չհամապատասխանող արտադրանքի՝ շրջանառության համար բաց թողնվելու դեպքում պատասխանատվություն է կրում՝ Կողմ հանդիսացող նշանակման պետության օրենսդրության համաձայն:

Հոդված 7

1. Կողմ հանդիսացող պետության լիազոր մարմինները իրենց պետությունների տարածքում պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրության համաձայն սահմանված պահանջներին արտադրանքի չհամապատասխանության բացահայտման դեպքում հնարավորինս կարճ ժամկետում տեղեկացնում են այդ մասին Կողմ հանդիսացող մյուս պետությունների լիազոր մարմիններին եւ ձեռնարկում են միջոցներ՝ իրենց տարածք նման արտադրանքի ներսերումը կանխելու ուղղությամբ:

2. Սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետություններից (այսուհետ՝ երրորդ երկրներ) փոխմատակարարվող կամ մատակարարվող եւ Կողմ հանդիսացող պետություններից մեկում համապատասխանության հաստատման սահմանված ընթացակարգերն անցած արտադրանքի համապատասխանության լրացուցիչ հաստատումը կատարվում է, եթե Կողմ հանդիսացող պետությունների՝ տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժական ու բուսասանիտարական միջոցների ուղղությամբ աշխատանքներ իրականացնող լիազոր մարմիններից, միջազգային կազմակերպություններից կամ երրորդ երկրներից տեղեկություններ են ստացվում այն մասին, որ տվյալ արտադրանքը վտանգ է ներկայացնում մարդու կյանքի ու առողջության, գույքի եւ շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի եւ առողջության համար կամ սպառողներին մոլորության մեջ է գցում:

Հոդված 8

Կողմերն ապահովում են համապատասխանության հաստատմանը վերաբերող անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացումը Մաքսային միության հանձնաժողով՝ Մաքսային միության հանձնաժողովի որոշման համաձայն:

Հոդված 9

Կողմերի միջեւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե վեճը չի կարգավորվում խորհրդակցությունների ու բանակցությունների անցկացման վերաբերյալ վեճի մի Կողմի կողմից մյուս Կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման այլ միջոցի վերաբերյալ Կողմերի միջեւ պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 10

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2009 թվականի դեկտեմբերի 11-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմի տրամադրում է դրա հաստատված օրինակը:

Բելառուսի
Հանրապետության
Կառավարության կողմից՝

(ստորագրություն)

Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության կողմից՝

(ստորագրություն)

Ռուսաստանի
Դաշնության
Կառավարության կողմից՝

(ստորագրություն)